

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.Ա.ԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Համագործակցային հմտությունների ձևավորումն ու զարգացումը տարրական դպրոցում Նախագծային ուսուցում մեթոդով

Կատարող՝ Ավետիսյան Եթեր Խումբ 1-ին

Ղեկավար՝ Բեյբուրյան Հասմիկ Մարտունու ավագ դպրոց 2023

Ք. Մարտունի

2023թ.

Բովանդակություն

1. Ներածություն-----
----- 3

2. Գրական
ակնարկ-----
----- 4

3. Նախագծային մեթոդի տարբերությունն այլ մեթոդներից-----
7

4. Նախագծային մեթոդի
ներառականությունը----- 8

5. Փորձարական մաս
1-----
----- 9

6. Փորձարական մաս
2-----
----- 10

7. Փորձարարական դաս
1-----
----- 11

8. Փորձարարական դաս
2-----
----- 14

9.
Եզրակացություն-----
----- 16

10. Օգտագործված գրականության
ցանկ----- 17

Ներածություն

Այս աշխատանքը նպատակ ունի հետազոտելու՝ արդյո՞ք նախագծային աշխատանքը արդարացված է տարրական դարձնել, թե՞ այն աշխատում է ավելի բարձր տարիքային խմբերի՝ հիմնական և ավագ դպրոցներում սովորող աշակերտների հետ:

Նախագծային աշխատանքի հիմնական և կարևոր առանցքային կետերից մեկը համագործակցային հմտությունների զարգացումն է նախագծային մեթոդի միջոցով: Նախագծային մեթոդի հիմնական նպատակն է առաջադրանքների և գործնական աշխատանքների լուծման գործընթացում ինֆունուրայն ձեռք բերել գիտելիքներ:

Նախագծային մեթոդը հանդիսանում է հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մեթոդների համադրություն: Ուսուցիչը հանդիսանում է համակարգող, մեակող, ուղղորդող, բայց ոչ սովորեցնող: Նախագծային մեթոդը խթանում է սովորողների քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորմանն ու զարգացմանը, ինչը հանդիսանում է շախմատային մտածողության կորիզը¹: Շախմատ առարկայից նախագիծն իրականացնելիս սովորողների մոտ զարգանում են մի շարք հմտություններ, ինչպիսիք են.

- ✓ սովորողների պատասխանատվություն

¹ Զեռնարի ուսուցիչների համար. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Տիգրան Մեծ հրատարակչություն, 304 էջ

- ✓ ինֆնուրույնություն
- ✓ մեդիայից և զանազան աղբյուրներից օգտվելու հմտություն
- ✓ կազմակերպչական աշխատանքներ իրականացնելու հմտություններ
- ✓ սոցիալական հմտություններ
- ✓ խմբի հետ աշխատելու հմտություններ
- ✓ սովորել սովորելու կարողություն
- ✓ միմյանց հետ համագործակցելու հմտություն

Քանի որ տարրական դպրոցում սովորողներն ավելի ինֆնուրույն չեն և դասապատրաստման գործընթացում ծնողի կամ մեծահասակի օգնության կարիք ունեն, ապա այս աշխատանքի խնդիրն է պարզել՝ արդյո՞ք տարրական դպրոցում սովորողը կկարողանա ինֆնուրույն աշխատանք կատարել, առավել ևս կատարել արդյունավետ խմբային աշխատանք, որը ենթադրում է նաև համագործակցություն միմյանց և մյուս խմբերի հետ:

1. Գրական ակնարկ

Նախագծայինը ուսուցման մի մեթոդ է, որի իրականացման ընթացքում սովորողները ներգրավվում են կարճաժամկետ կամ երկարաժամկետ նախագծային աշխատանքներում, որոնք պահանջում են ուսումնական տարբեր առարկաներին առնչվող և իրական կյանքում հանդիպող խնդիրների համալիր լուծումներ:

Մեթոդը ներդրվել է 18-րդ դարում Եվրոպայում՝ հարտարապետության և հարտարագիտության դպրոցներում, երբ ավարտելուց հետո ուսանողները պետք է կիրառեին իրենց ուսման ընթացքում սովորած հմտություններն ու գիտելիքները, օրինակ, լուծելին հուշարձանի նախագծման խնդիրներ:

Նախագծային մեթոդը անվանվում էր նաև պրոբլեմների ուսումնասիրման մեթոդ, որը կապվում էր, նախ և առաջ, մարդասիրական խնդիրների ուսումնասիրման հետ: Այս մեթոդը մշակել են ամերիկացի փիլիսոփա, մանկավարժ Ջոն Դյուին և նրա աշակերտ Վ. Ն. Կիլպատրիկը²:

Դյուին առաջարկում էր ուսուցման հիմքում դնել սովորողի ակտիվությունը՝ հիմնվելով սովորողի նպատակային գործունեության և անհատական հետաքրքրությունների վրա: Կարևոր է սովորողներին ցույց տալ իրենց անձնական շահագրգռվածությունը գիտելիք ստանալու գործընթացում. գիտելիք, որը կարող է և պետք է կիրառվի կյանքում: Ուսուցիչը կարող է հուշել տեղեկատվության նոր աղբյուրներ կամ պարզապես անհրաժեշտ ուղղությամբ տանել աշակերտի միտքը: Արդյունքում սովորողները պետք է ինֆնուրույն, համատեղ ջանքերով հաղթահարեն դժվարությունը՝ օգտագործելով տարբեր առարկաներից համապատասխան

² <https://hy.wikipedia.org/wiki>

գիտելիքը, հնտությունը՝ անհրաժեշտ արդյունք ստանալու համար:

Դյուին գրում է. «Երեխան կրկնում է մարդկության ֆանաշողության ուղին, գիտելիքի յուրացումը սպոնտան (ինքնաբուխ), անկառավարելի գործընթաց է. երեխան յուրացնում է նյութը ոչ թե լսելով կամ ընկալելով զգայական համակարգով, այլ երբ գրում է այդ գիտելիքի կարիքը և յուրացման գործընթացի ակտիվ մասնակից է»:

Դյուին կրթության հաջողության գրավական է համարում³.

- Ուսումնական նյութի պրոբլեմատիկացումը
- Երեխայի ակտիվությունը
- Կրթության կապը երեխայի կյանքի, խաղի, աշխատանքի հետ:

Տարիների ընթացքում նախագծային մեթոդն ունեցավ զարգացման և անկման փուլեր: 1905թ ուսումնական Շագկին սկսեց լրջորեն զբաղվել այս մեթոդի ձևակերպումներով ու փորձարկումներով:

Ավելի ուշ՝ 1931թ., Խորհրդային Միությունում այս մեթոդը դատապարտվեց և արգելվեց:

Եվրոպական երկրներում էլ նախագծային մեթոդը սարբերային զարգացում ունեցավ: Այժմ աշխարհում այս մեթոդին կրկին սկսել են լուրջ ուշադրություն դարձնել: Հիմնական ձևակերպումը հետևյալն է. «Գիտեն, թե ինչի համար է ինձ պետք այն, ինչ ես սովորում եմ, որտեղ և ինչպես կարող եմ գործածել»:

Նախագծերի մեթոդը խմբային աշխատանք է, որը սովորողներին իրականացնում են որոշակի ժամանակահատվածում: Հիմնականում ուղղված է որևէ վիճարկելի խնդրի հաղթահարմանը: Նախագծային մեթոդը կարևորում է միջառարկայական կապը և համագործակցությունը: Ենթադրում է հետազոտական, որոնողական, համադրական, ստեղծագործական կարողությունների խթանում:

Համարվում է, որ այս մեթոդով աշխատող ուսուցիչը բարձր որակավորում ունեցող մասնագետ է և հմուտ մանկավարժ:

Ցանկացած նախագծի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժության մեջ անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Այն է՝ գիտելիքները, հմտությունները, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց մոբիլիզացում և կիրառելու պատրաստակամություն:

³ <https://escs.am/files/files/2021-10-18/e2d8fba12e16f3699429e9bf678dd872.pdf>

Նախագծային մեթոդը ստեղծում է նպաստավոր պայմաններ հետևյալ կարողությունների ու հմտությունների ձևավորման ու զարգացման համար.

1. Ռեֆլեկտիվ հմտություններ
2. Որոնողական, հետազոտական հմտություններ
3. Համագործակցային հմտություններ
4. Կառավարման կարողություններ, հմտություններ
5. Շնորհանդեսների պատրաստման հմտություններ
6. Ներկայացման հմտություններ

1.1 Նախագծային մեթոդի տարբերությունն այլ մեթոդներից

- Երեխաների հետաքրքրությունների շրջանակի բացահայտում
- Երեխաների գիտելիքների և կարողությունների պրակտիկ կիրառություն, նախաձեռնողականություն

- ☒ Դպրոցի տարածֆից դուրս գիտելիքների և հմտությունների ձեռք բերում
- ☒ Երեխաների գործունեության մաքսիմալ ինֆուորյունություն և ստեղծագործական մոտեցում
- ☒ Գործընթացի հանրային արդյունք(պրոդուկտ) և ներկայացում

Այսօր նախագծային մեթոդը լայն տարածում է ստանում հանրակրթական ուսումնական գործընթացում, որի միջոցով երեխաները ձեռք են բերում հետևյալ ունակությունները.⁴

- ☒ անձնական փորձի ձեռքբերում
- ☒ արդյունքի նախագծում, պլանավորում
- ☒ անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկում,
- ☒ որոշումների կայացում
- ☒ պատասխանատվության ստանձնում,
- ☒ կոմունիկատիվ հմտությունների ձեռքբերում:

Այս ունակությունները նպատակահարմար է զարգացնել նախադպրոցական տարիքից:

1.2 Մեթոդի ներառականությունը⁵

- ✓ նախագծային մեթոդը անհատականության վրա հիմնված ուսուցման ձև է
- ✓ մեթոդը թույլ է տալիս հաշվի առնել երեխայի հոգեկան և ֆիզիկական վիճակը՝ ապահովելով իրատեսական և իրագործելի ուսումնական, իմացական, կոմունիկատիվ ծանրաբեռնվածություն
- ✓ մեթոդի իրագործման ընթացքում անհրաժեշտ է տարբեր մասնագետների ներգրավվածությունը, ինչը կնպաստի երեխայի խնդրի բազմակողմանի լուծմանը թիմային մոտեցումով
- ✓ ծնողները կրթական գործընթացի ակտիվ մասնակիցներն են, ինչը առավել անհրաժեշտ է ներառական կրթության կարիք ունեցող երեխաների համար:

⁴ <https://dpir.mskh.am/hy/node/497>

⁵ https://usum.am/load/naxagcayin_metody_tarrakan

2. Փորձաքարական մաս 1

Ես իմ հետազոտությունը կատարել եմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մ. Մելիք – Շահումյանցի անվան թիվ 1 հիմնական դպրոցում «Շախմատ» առարկայից 3-րդ ք դասարանի աշակերտների հետ: Դասարանում սովորում էին 20 աշակերտ, որոնք «Շախմատ» առարկան ուսումնասիրում էին երկրորդ տարին, շաբաթական երկու ժամ, 4-րդ և 6-րդ ժամերին:

Դասարանում կային մի քանի աշակերտներ, ովքեր հետաքրքրված չէին «Շախմատ» առարկայով և չէին ցանկանում համագործակցել իրենց ընկերների հետ: Ընդհանուր առմամբ դասարանում թույլ էր համագործակցային աշխատանքը և աշակերտների մոտ զարգացած չէր խմբային աշխատանք կատարելու հմտությունը: Այստեղ հարց էր առաջանում. արդյո՞հ հնարավոր կլինի նախագծային մեթոդի կիրառմամբ հասնել համագործակցային հմտությունների զարգացմանը, արդյունավետ խմբային աշխատանքների կատարմանը՝ դրանցում ընդգրկելով նաև Շախմատ խաղով չհետաքրքրվող աշակերտներին: Որոշեցի «Անպատասխան խաղափար» թեմայով նախագծային աշխատանք իրականացնել՝ հատկապես ուշադրություն կենտրոնում ունենալով թույլ սովորող աշակերտներին: Նախագծային աշխատանքի թեմա վերցվեց

«Անպատուական խաղաքար»-ը: Դասարանը բաժանվեց չորս խմբի, յուրաքանչյուր խմբում կար թույլ ունակություններով մեկ աշակերտ, որոնք գտնվում էին իմ ուսուցչության կենտրոնում: Ինձ հետաքրքիր էր տեսնել նրանց գործունեությունը թիմում: Աշակերտները կազմեցին նախագծի պլանը և խմբերն սկսեցին պատրաստվել աշխատանքի:

Շաբաթը մեկ անգամ սովորողները ներկայացնում էին, թե ինչ աշխատանք են կատարել և համապատասխան ուղղորդումներ էին արվում: Հարկ էն համարում նշել, որ նախապես ծնողներին ներկայացրել էի նախագծային աշխատանքի մասին իմ մտահոգությունները և խնդրել նրանց չաշխատել աշակերտների փոխարեն, այլ միայն ուղղորդել և օգնել, արամադրել համակարգիչ կամ հեռախոս, ապահովել ինտերնետ կապ և այլն:

Նախագծային աշխատանքը կարճաժամկետ էր և փորձնական բնույթ էր կրում, այդ իսկ պատճառով մի քանի դաս հետո աշակերտները պատրաստ էին ներկայացնելու աշխատանքը: Թեմատիկ պլանով Նախագծային աշխատանքի ներկայացման համար նախատեսված էր երկու դասաժամ:

2. Փորձարարական մաս 2

Հաջորդ դասը, որը ևս փորձարարական բնույթ է կրում, կատարել են նույն դպրոցի 4-րդ և դասարանի աշակերտների հետ: Դասարանում սովորում էին 22 աշակերտ, դասարանն ընդհանուր առմամբ լավ դասարան էր, որակն այդ դասարանում կազմում էր 90 %, սակայն ես նկատում էի, որ աշակերտները չեն համագործակցում, խմբային աշխատանքը զարգացած չէ նրանց մոտ: Հետևաբար որոշեցի «Անթագակիր չեմպիոններ» թեմայի շրջանակում խթանել նրանց մոտ համագործակցային մեթոդով խմբային աշխատանք կատարել: «Անթագակիր չեմպիոններ»-ը բաց դասի թեմա էր, ես հասկանում էի, որ դժվար է լինելու, սակայն համառոտ են ցանկանում էի ստիպել, որ սովորողները ինֆնուրույն աշխատեն, աշխատանքի ընթացքում համագործակցեն և ունենան դրական արդյունք: Թեման ներկայացնելուց հետո հանձնարարեցի սովորողներին անթագակիր չեմպիոնների մասին ինտերնետ կայքերից տեղեկություններ հավաքել, մշակել, գեղեցիկ ձևավորել, հանձնարարեցի նաև գեղեցիկ պատի թերթ պատրաստել անթագակիր չեմպիոնների նկարներով և համապատասխան տեղեկատվական նյութով: Այդ ամենն անելու համար հանձնարարեցի բաժանվել խմբերի և աշխատել. այդ դեպքում աշխատանքը և՛ հեշտ կլիներ, և՛ կաշխատեին՝ համագործակցելով միմյանց հետ: Խանդավառված առաջարկից՝ աշակերտներն սկսեցին աշխատել:

Մի քանի դաս հետո պետք է ներկայացվեր դասը: Իմ նպատակն էր, որպեսզի կարողանամ աշխատեցնել սովորողներին ինֆնուրույն, միմյանց հետ համագործակցելով՝ զարգացնելով սովորել սովորելու կարողունակությունը, ներկայանալու և ներկայացնելու հմտությունները /հաղորդակցական կարողունակություններ /, համագործակցային և սոցիալական կարողունակությունները:

2.1 Փորձարարական դաս 1. Անպաշտպան խաղաֆար / նախագծային աշխատանքի պաշտպանություն /

Նախագծային աշխատանքի ներկայացմանը ներկա էին ուսումնական տնօրենը, ուսումնական գծով փոխտնօրենը, մասնագիտական աջակցությունների գծով փոխտնօրենը, մեթոդախաղաղման նախագահը, դասղեկը:

Ողջունի խոսքից հետո խոսքը փոխանցվեց աշակերտներին՝ ներկայացնելու իրենց աշխատանքը:

Նախ աշակերտները խումբ առ խումբ կարդացին իրենց կատարած աշխատանքը, այն է՝ պատասխանեցին պահանջով նախատեսված հարցադրումներին՝ ներկայացնելով իրենց ուրույն, սեփական տեսակետներն առաջ քաշված հարցերի շուրջ: Նրանք պատրաստել էին հետաքրքիր ցուցապատումներ, որոնց միջոցով ներկայացրեցին, թե ինչ է նշանակում անպաշտպան լինելը սոփոխում, սահմանին և, իհարկե, անպաշտպան խաղաֆարի թուլությունները շախմատում:

Աշխատել էին նաև թույլ ունակությունների տեր աշակերտները, ինձ համար բացահայտում էր հատկապես Սոնայի աշխատանքը, որտեղ նա խոսում էր անպաշտպաններին օգնելու անհրաժեշտության մասին, քանի որ իր բույրիկը ևս իր կարծիքով այդպիսին էր և պաշտպանության կարիք ուներ /Սոնայի բույրիկը ԿԱՊԿՈՒ աշակերտ է /:

Աշակերտները կարողացել էին օգտվել օնլայն բառարանից, նրանք դուրս էին գրել անպաշտպան բառի բացատրությունը ըստ էդվարդ Ադայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ի: Այնուհետև ցուցատախտակին շարվեցին տարբեր տրամագրեր, և աշակերտները վերլուծելով բացատրեցին խնդիրները:

Աշակերտները քիմային աշխատանք էին կատարել, յուրաքանչյուր խումբ կատարել էր իր հանձնարարականը և արդյունքում ստացվել էր մեկ աշխատանք:

Նախագծային աշխատանքի վերջում աշակերտներին հանձնարարեցի գնահատել միմյանց. 1-ին խումբը գնահատեց 3-րդ խմբին և հակառակը, 2-րդ խումբը գնահատեց 4-րդ խմբին և հակառակը:

Գնահատման մեջ երևաց սովորողների անաչառությունը, նրանք գնահատում էին միմյանց՝ հիմնավորելով իրենց տված միավորները:

Նախագծային աշխատանքը կարճաժամկետ էր, տեղեկատվական – հետազոտական բնույթի: Աշխատանքի նպատակն էր.

- Զարգացնել ինֆորմայն մտածելու կարողությունը
- Խորացնել գիտելիքները և կարևորել դրանք
- Կիրառել գիտելիքները
- Զարգացնել հետազոտական և վերլուծական մտածողություն, ձևավորել և ամրապնդել
ֆինադատական մտածողությունը
- Ստեղծագործաբար մոտենալ թեմային
- Համագործակցային հմտություններ զարգացնել
- Իրատեսական նպատակների սահմանում
- Նպաստել յուրաքանչյուր մասնակցի ինֆրագնահատականի բարձրացմանը
- Մեղիագրագիտության հմտությունների զարգացում
- Մյուսներին ստույգ գնահատելու հմտություն
- Կամային հասկանիչների ձևավորում, ավարտին հասցնելու ունակություն

Նախագծային աշխատանքի գնահատման չափանիշներն են.

- աշխատանքի ինֆորմայնությունը,
- թեմայի արդիականությունը և կարևորությունը,
- թեմայի ամբողջականությունը, առաջարկվող լուծումների ինֆրատիպությունը,
- նախագծի ներկայացումը, բովանդակության բացահայտումը,
- ներկայացման արտահայտչականությունը,
- տեսողական միջոցների, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը:

Նախագիծն իրականացնելիս սովորողների մոտ զարգանում են մի շարք հմտություններ, ինչպիսիք են.

- սովորողների պատասխանատվություն
- ինֆորմայնություն
- մեղիայից և գանազան աղբյուրներից օգտվելու հմտություն
- կազմակերպչական աշխատանքներ իրականացնելու հմտություններ
- սոցիալական հմտություններ
- խմբի հետ աշխատելու հմտություններ

2.2 Փորձարարական դաս 2. Անթագակիր չեմպիոններ

Դասին ներկա էին ուսումնական գծով փոխտնօրենը, մասնագիտական աջակցությունների գծով փոխտնօրենը, մեթոդախորհրդանախագահը, դասուցիչը: Դասն սկսվեց ողջույնի խոսքով, կատարվեց հաշվառում, ապա հանձնարարվեց առակերտներին մատուցել իրենց կատարած աշխատանքը:

Նախապես առաջնություններն արդեն բաժանվել էին խմբերի, երեք խմբերից յուրաքանչյուրում լավ սովորողների հետ ընդգրկվել էին նաև թույլ կարողությունների տեր առաջնությունները, ովքեր ևս մասնակցել էին աշխատանքին: Նախ առաջնությունները ներկայացրեցին, թե ինչու են անվանի շախմատիստներն անվանվել անթագակիր չեմպիոններ, թվեցին նրանց անունները (Պոլ Մորֆի, Ադոլֆ Անդերսեն, Հովարդ Սթաունթոն, Լուի Լամբորդենե և այլք): Յուրաքանչյուր խմբի տրվեց մեկ անթագակիր չեմպիոնի անուն և խումբը տեղում սկսեց աշխատել: Ապա ամեն խմբից մեկական առաջնություն ներկայացրեց մեկ չեմպիոնի՝ մանրամասն ներկայացնելով կյանքն ու ստեղծագործական գործունեությունը: Ընթացքում ես ևս ուղղորդում և լրացուցիչ սեղեկություններ էի հաղորդում չեմպիոնների մասին:

Խմբերը հերթով ներկայացրեցին և ավարտեցին տեսական մասը՝ լրացնելով միմյանց: Պատի թերթը՝ անթագակիր չեմպիոնների նկարներով, շատ գեղեցիկ էր ստացվել:

Տեսական մասից հետո սկսվեց գործնական մասը, որն իր մեջ ներառում էր անթագակիր չեմպիոնների խաղացած պարտիաների վերլուծությունները: Առաջնությունները հետաքրքիր դատողություններ էին անում, տրամաբանված ներկայացնում խնդրի լուծումը, վերլուծություններ անում, տարբերակներ առաջարկում:

Դասի ընթացքում կատարեցի ձևավորող՝ խրախուսող գնահատում, իսկ ավարտին՝ միավորային գնահատում՝ նշելով սովորողների թերություններն ու առավելությունները, ապա հանձնարարեցի տնային աշխատանք՝ բացատրելով, թե ինչպես աշխատեն տանը:

Պետք է հավելեն, որ «Շախմատ» առարկան մեծ հնարավորություն է տալիս սովորողներին՝ զարգացնելու վերլուծական կարողությունները, ստեղծագործաբար մոտենալու թեմային և ֆինադատական դատողություններ անելու:

«Շախմատ» առարկան ուսումնասիրող սովորողի մոտ զարգանում են Հանրակրթական պետական չափորոշչով սահմանված ութ կարողունակություններից վեցը, այն է՝

1. Լեզվական կարողունակություն և գրագիտություն
2. Սովորել սովորելու կարողունակություն
3. Ինֆորմացիոնա-տեխնոլոգիական և սոցիալական կարողունակություն
4. Թվային և մեդիա կարողունակություն
5. Մշակութային կարողունակություն
6. Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն

Եզրակացություն

Երկու դասարաններում էլ աշակերտները կարողացել էին խմբերով աշխատել, գնահատել միմյանց հնարավորությունները, կատարել վերլուծություններ: Նախագծային աշխատանքը հնարավորություն էր տվել զարգացնելու օնլայն հարթակից օգտվելու հմտություններ. նրանք սովորել էին ճիշտ օգտվել օնլայն բառարաններից: Նախագծային աշխատանքն օգնեց խորացնել գիտելիքները և կիրառել դրանք ըստ նպատակի: Նրանք կարողացան ճիշտ գնահատել մեկը մյուսին և համագործակցային մեթոդով խմբային աշխատանքի շրջանակներում ավարտին հասցնել թեման:

Նախագծային աշխատանքի կարևոր կետերից մեկը տարրական դասարանում այն է, որ ՆԱ / նախագծային աշխատանքը / հնարավորություն է տալիս սովորել լինել ինքնուրույն, համախմբված աշխատել, համագործակցել միմյանց հետ, լսել միմյանց և սովորել սովորելու միջոցով: ՆԱ հնարավորություն է տալիս մտածել, ֆինադատել, վերլուծել և կարողանալ վստահ, ինքնուրույն և գրագետ արտահայտել մտքերը: Զարգանում են հաղորդակցական կարողությունները, ճիշտ ներկայանալու և ներկայացնելու հմտությունները:

Տարրական դասարանում աշխատանքը նախագծի վրա հնարավորություն է տալիս աշակերտներին ընկալելու նախագծի իմաստը՝ հետագայում ավելի հմուտ և ինքնավստահ աշխատելու, ներկայանալու և ներկայացնելու գործընթացում:

Նախագծային մեթոդը հնարավորություն է տալիս ունենալու ստեղծագործ, սրունդ, սովորող և անընդհատ կարդացող-մտածող- սովորող ուսուցիչ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ջեռնարկ ուսուցիչների համար. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Տիգրան Մեծ հրատարակչություն, 304 էջ:
2. https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%AE%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4
3. <https://escs.am/files/files/2021-10-18/e2d8fba12e16f3699429e9bf678dd872.pdf>
4. <https://dpir.mskh.am/hy/node/497>
5. https://usum.am/load/naxagcayin_metody_tarraka

Հավելված

ԴԱՄԻ ՊԼԱՆ

Դաս Անպատասխան խաղափար

Ուսուցիչ Եթեր Ավետիսյան

Առարկա՝ ԵԱԽՄԱՏ	
Դասարան՝ 3-րդ	Ուս. տարի 2023-2024
Դասի նպատակ	Զնավորել այլընտրանքային, բազմատարբերակային մտածողություն սովորողների մաս: Օգտագործելով դիրքի գնահատումը՝ սովորողների միջոցով բացահայտել մարտավարական հնարքը:
Դասի վերջնարդյունքներ	Սովորողը պիտի կարողանա գնահատել և վերլուծել դիրքը, որոնք և գտնել այլընտրանքային ուղիներ՝ կիրառելով մարտավարական հնարքը:
Ընդհանրական խաչվող հասկացություններ	Անհատական և մշակութային արտահայտում Մարտավարական իրավիճակների ստեղծում և մոդելավորում: Համակարգեր և մոդելներ Մարտավարական մոդելները հասկանալու և կիրառելու հմտություններ: Պատճառ և հետևանք

	Մարտավարական իրավիճակներում պատճառահետևանքային կապերի վերհանման և վերլուծության հմտությունների ձևավորում:
Միջառարկայական կապեր	Մայրենի լեզու – Նորածանոթ հասկացությունները կարդալու, դրանք մտապահելու, սեփական մտքերը գրագետ, տրամաբանված, համոզիչ և հակիրճ արտահայտելու կարողություն: Մաթմատիկա – Խնդրի պայմանը և պահանջը բացահայտելու և լուծելու կարողություն: Արվեստ – Նորի ստեղծում:
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	Դասագիրք, վարժությունների տետր, ցուցատախտակ, խաղատախտակ, խաղաքարեր, գրատախտակ, կավիճ, համակարգիչ, ինտերնետ կապ:
Ուսուցման մեթոդներ	Մտազրույց, հարցադրումներ, բացառման, խրախուսանք
Առաջարկվող գործունեության ձևեր	Խնդիրների լուծում մարտավարական հնարքներով: Խնդիրների ստեղծում մարտավարական հնարքներով:
Գնահատում	Միավորային և ձևավորող գնահատում
Կապը Հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների հետ	S1, S3, S4, S7, S8, S9, S14, S22, S25, S26, S28
<p>Դասի ընթացքը</p> <ul style="list-style-type: none"> ● Հաշվառում, բանավոր հարցում, տնային աշխատանքի ստուգում(2-5 րոպե) ● Նոր նյութի մատուցում. Մտազրույցի միջոցով պարզել անպաշտպան բառի բացատրությունը՝ կապելով կյանքի տարբեր իրավիճակների և շախմատի հետ: Խոսել անպաշտպան խաղաքարի թուլությունների մասին՝ օրինակներ բերելով կենցաղից: (15 րոպե) ● Տրամագրերի լուծում. Լուծել «Անպաշտպան խաղաքար» թեմային վերաբերող տրամագրեր՝ ուղղորդելով աշակերտներին գտնելու հիշատակախոսությունը: (15 րոպե) ● Խաղ. Խնդիրների լուծում մարտավարական հնարքներով: (8 րոպե) ● Ամփոփում. Հարց ու պատասխանի միջոցով ամփոփել դասը, հանձնարարել տնային առաջադրանք (2րոպե) <p>Թեմային վերաբերող հարցադրումներ</p> <ol style="list-style-type: none"> 1. Ո՞ր խաղաքարն է համարվում անպաշտպան: 2.Անպաշտպան խաղաքարերը շահելիս ո՞ր մարտավարական հնարքից օգտվեցիք: 	

ԴԱՄԻ ՊԼԱՆ

Դաս 45 Անթրագակիր չեմպիոններ

Ուսուցիչ _____ Եթեր Ավետիսյան _____

Առարկա՝ ԾԱԽՄԱՏ	
Դասարան՝ 4-րդ	Ուս. տարի 2023-2024
Դասի նպատակ	Սովորողներին ներկայացնել անթրագակիր չեմպիոնների ստեղծագործություններից, կարևորելով սեռային առանձնահատկությունները:
Դասի վերջնարդյունքներ	Սովորողը պիտի կարողանա մեկնաբանել անթրագակիր չեմպիոնների ռազմավարությունը:
Ընդհանրական խաչվող հասկացություններ	Օրինաչափություններ Խաղի և կանոնների իմացություն, գործող օրինաչափությունների համադրում: Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում Յուրաքանչյուր սրբոսման և ֆայլի հիմնում գործող մեխանիզմների կիրառում: Համակարգեր և մոդելներ Խաղի մասերի մոդելների կառուցման հմտություններ: Կայունություն և փոփոխություն Դինամիկ փոփոխությունների ընկալման հմտություններ:
Միջառարկայական կապեր	Մայրենի լեզու – Նորածանոթ հասկացությունները կարդալու, դրանք մտապահելու, սեփական մտքերը գրագետ, տրամաբանված, համոզիչ և հակիրճ արտահայտելու կարողություն: Մաթեմատիկա – Խնդրի պայմանը և պահանջը բացահայտելու և լուծելու կարողություն: Արվեստ – Նորի ստեղծում:
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	Դասագիրք, վարժությունների տետր, ցուցատախտակ, խաղատախտակ, խաղաքարեր, գրատախտակ, կավիճ, համակարգիչ, ինտերնետ կապ:
Ուսուցման մեթոդներ	Մտազրույց, հարցադրումներ, բացառման, խրախուսում

Առաջարկվող գործունեության ձևեր	Ռազմավարական իրավիճակների ֆննարկում: Ռազմավարական ծրագրերի ֆննարկում: Բանավեճ «Պլանավորումը շախմատում և կյանքում» քեմայով:
Գնահատում	Միավորային և ձևավորող գնահատում
Կապը Հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնադյունքների հետ	S1, S3, S4, S7, S8, S9, S14, S22, S23, S25, S26, S28, S33
<p>Դասի ընթացքը</p> <ul style="list-style-type: none"> ● Հաշվառում, բանավոր հարցում, տնային աշխատանքի ստուգում(2-5 րոպե) ● Նոր նյութի մատուցում. Խոսել աշխարհի ուժեղագույն շախմատիստների մասին, բացատրել՝ ինչու են ստացել անթագակիր չեմպիոն կոչումը: (15 րոպե) ● Տրամագրերի լուծում. Վերլուծել անթագակիր չեմպիոնների խաղացած պարտիաները(15 րոպե) ● Խաղ (8 րոպե) ● Ամփոփում. Հարց ու պատասխանի միջոցով ամփոփել դասը, հանձնարարել տնային առաջադրանք (2րոպե) <p>Թեմային վերաբերող հարցադրումներ</p> <p>1.Ովքե՞ր են անթագակիր չեմպիոնները:</p> <p>2.Մարտավարական ի՞նչ հնարք էր հաճախ օգտագործում Պոլ Մորֆին:</p>	